[redacted]

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 2-րդ ենթակետը, 7 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատված համարել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝

ա.կրտսեր բուժաշխատող Գևորգ Մնացականյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով, 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման փաստերը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին կրտսեր բուժաշխատող Գևորգ Մնացականյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ իրավասու անձին.

բ.ավագ բուժաշխատող Գոռ Հարությունյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման փաստը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Գոռ Հարությունյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ իրավասու անձին:

2.Սույն որոշումը կողմերի կողմից կարող է բողոքարկվել Հանձնաժողովին՝ այն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 25-րդ կետի համաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ՝
ՆԱԽԱԳԱՀ՝ **ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆ**